Պարույր Սևակ

Առաջին սերը

Պե՛տք չէ, սիրելի՜ս:
Զո՜ւր ես երդվում:
Առանց երդման էլ ես հավատում եմ,
Որ հիմա օրվդ մի դար է տևում,
Որ փուշ կարոտը քեզ ծվատում է,
Որ գիշերն ի լույս չես քնում հաճախ,
Որ իմ անունն ես կրկրնում հաճախ,
Որ աղջկական քո մաքուր բարձին
Թեքված ես տեսնում մի ծերուկ արծիվ
(Անգվդ էլ լինի՝ արծիվ է թվում),
Որ քեզ աշխարհում ոչի՜նչ չի թվում,
Որ առանց սիրուս կյանքվդ կորած է,
Որ...
Գիտե՛մ, ջա՜նըս.
Զո՜ւր ես կրկրնում.
Բայց գիտեմ և այն,
Ինչ դո՛ւ չգիտես.
Առաջին սերը, ինչպես որ հացը,
Ի՜նչ էլ որ անես՝ միշտ կուտ է գնում...

20.XII.1958թ.
Մոսկվա